

### 5.3. 2011 թվականի նոյեմբեր ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, նոյեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը եղել է նորմայից ցածր 3-6 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 2-5 աստիճանով, երկրորդ և երրորդ տասնօրյակներում՝ 3-6 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +7 +10°C, Արարատյան դաշտավայրում և դրա նախալեռներում, ՀՀ Տավուշի մարզում՝ +6 +8°C, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ +1 +5°C, ՀՀ Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -2 +2°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է նոյեմբերի 1-2-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +15 +18°C, Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում՝ +13 +17°C, ՀՀ Լոռու մարզում՝ +12 +15°C, Սյունիքի նախալեռներում՝ +9 +11°C, ՀՀ Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +8 +13°C (Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ +5°C):

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է -4 -9°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -11.5°C), ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ 0 -4°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ -2 +2°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է նոյեմբերի 25-26-ին: ՀՀ Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում գրանցվել է -15 -20°C (Աշոցք գյուղում՝ -28°C, ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ -22°C), ՀՀ Լոռու մարզում՝ -14 -17°C, Սյունիքի նախալեռներում՝ -11 -13°C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -19°C), ՀՀ Տավուշի մարզում՝ -10 -14°C, Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում՝ -5 -10°C:

Ամսական տեղումների քանակը ՀՀ Շիրակի մարզում կազմել է նորմայի 40-60%-ը, Արարատյան դաշտավայրում՝ 41-72%, ՀՀ Կոտայքի մարզում՝ 65-75%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 44-81%, ՀՀ Տավուշի մարզում՝ 46-86%, ՀՀ Լոռու մարզում՝ 66-97%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 70-97%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 100-294% (ք.Սևանում՝ 80%):

Նոյեմբերի 4-ին, 11-13-ին, 16-19-ին և 25-ին տարածաշրջանների զգալի մասում, 5-7-ին, 20-24-ին, 27-28-ին և 30-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ, լեռնային և նախալեռնային շրջաններում՝ ձյան տեսքով:

Նոյեմբերի 30-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ) կազմել է 56 սմ, Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ)՝ 55 սմ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 36 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 23 սմ, Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ 19 սմ, Անանուն լեռնանցքում (ՀՀ Արարատի մարզ)՝ 17 սմ, ք.Մարտունիում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 16 սմ, ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 6-14 սմ:

Նոյեմբերի 2-6-ին, 12-ին, 16-22-ին և 27-ին Պուշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ), Անանուն լեռնանցքում, ՀՀ Կոտայքի մարզում և Արարատյան դաշտավայրում դիտվել է մառախուղ 20-500 մ տեսանելիությամբ: Նոյեմբերի 6-10-ին, 12-ին, 16-ին, 24-ին և 29-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 7-16 մ/վրկ, պոռթկումները՝ 16-24 մ/վրկ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 90-120%-ը:

Սևանա լճի մակարդակը նոյեմբեր ամսվա ընթացքում իջել է 4 սմ-ով և նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել 1900.18 մ, որը 2010թ. նույն օրվա համեմատ բարձր է 22 սմ-ով: